ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի

կառավարման խորհրդի նախագահ

«08» սեպտեմբերի 2023 թվական

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԿՏՊՔ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հրազդան 2023

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն ընթացակարգը սահմանում է ԿՏՊՔ ամբիոնների տարեկան աշխատանքների գնահատման նպատակները, գնահատման չափանիշները,

1.2 Սույն ընթացակարգը բխում է ԿՏՊՔ Որակի ապահովման քաղաքականությունից,

1.3 Սույն ընթացակարգը մշակվել, ներդրվել է Որակի կենտրոնի առաջարկով, հավանության է արժանացել ԿԽ-ի կողմից,

1.4 Սույն ընթացակարգում փոփոխությունները, լրամշակումները, վերանայումները կատարվում են նույն կարգով:

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Ամբիոնների աշխատանքների գնահատումը որակի ապահովման կենտրոնի խնդիրների տիրույթում է,

2.2 Ամբիոնների աշխատանքների գնահատումը որակի մշակույթի բաղկացուցիչ մասն է ,

2.3Գնահատման հիմքում որակի կառավարման սկզբունքի մշտադիտարկումն է՝ պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում շրջափուլով աշխատանքը,

2.4Գնահատման նպատակը ամբիոնների աշխատանքների արդյունավետության գնահատումն ու բարելավումն է,

2.5 Ամբիոնների աշխատանքների արդյունավետության գնահատումը միտված է ուսումնական գործընթացի արդյունավետ ապահովմանը, գործընթացների որակի շարունակական բարելավմանը:

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1 Ամբիոնների աշխատանքների գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ավարտին,

3.2 Գնահատումն իրականացվում է համաձայն Որակի կենտրոնի կողմից մշակված ձևաչափի,

3.3 Գնահատման նպատակով դիտարկվում են ամբիոնների տարեկան պլանավորումները, արձանագրությունները, հաշվետվությունները,

3.4 Ամբիոնների աշխատանքները գնահատվում են նաև ամբիոնի դասախոսների կողմից՝ Որակի կենտրոնի կողմից մշակված հարցաշարի համաձայն,

ԿՏՊՔ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4.1 Մասնագիտական ամբիոնի գործունեության գնահատման համար ուսումնական տարվա ավարտին ամբիոնի վարիչը Որակի ներքին ապահովման Կենտրոնին է ներկայացնում՝

- ամբիոնի կանոնակարգը
- դրանում կատարված փոփոխությունները
- տեղեկություն ամբիոնի գործունեության վերաբերյալ՝ ըստ աղյուսակ 1-ի (ուսումնական տարվա համար)

Աղյուսակ № 1՝

Տեղեկություն ամբիոնի գործունեության վերաբերյալ

№	Աշխատանքը
1.	Ամբիոնի տարեկան աշխատանքային պլան
2.	Տեղեկություն ամբիոնի դասախոսական կազմի, տարեկան բեռնվածության վերաբերյալ (աղյուսակ № 2)
3.	Տեղեկություն ամբիոնի դասախոսների ուսումնական գործունեության վերաբերյալ (աղյուսակ № 3)
4.	Ամբիոնի տարեկան հաշվետվություն
5.	Առարկաների(մոդուլների) ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման վերաբերյալ տեղեկություն

6.	Ամբիոնի դասախոսների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկման, հաստատման վերաբերյալ տեղեկատվություն
7.	Ամբիոնի նիստերի արձանագրությունների գիրք (նիստերին քննարկված հարցեր), ուսումնական տարվա ընթացքում անկացված նիստերի քանակ
8.	Դասալսումների, փոխադարձ դասալսումների վերաբերյալ տեղեկություն(աղյուսակ № 4)
9.	Ամբիոնի դասախոսների և նրանց վարած դասընթացների գնահատման վերաբերյալ տեղեկություն
10	Ամբիոնին կից լաբորատորիաների, կաբինետների մասին տեղեկություն (աղյուսակ 5№)
11.	Ամբիոնում անցկացված պրակտիկաների մասին տեղեկություն (աղյուսակ № 6)
12.	Ուսանողների հետազոտական, ինքնուրույն գործնական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն (աղյուսակ №7)
13	Ամփոփիչ ատեստավորման և քննությունների կազմակերպման գործընթացի վերաբերյալ տեղեկություն
14	Ուսանողների առաջադիմության ուսումնասիրության վերլուծություն
15	Քոլեջում կազմակերպվող միջոցառումներին և լրացուցիչ ծառայություններին մասնակցության տեղեկություն
16	Որակի ապահովում և մշտադիտարկում
17.	Եզրակացություն և սվոթ վերլուծություն ամբիոնի տարեկան աշխատանքների վերաբերյալ , առաջարկների ներկայացում

Աղյուսակ № 2

---------- ամբիոնի անդամների 20..../20.....ուստարվա դասախոսական կազմը/ մանկավարժական բեռնվածության/

N	Ազգանուն անուն, հայրանուն	Ծննդյան տարեթիվ, կրթությունը	Որակավորումը (մասնագիտությունը՝ ըստ կրթության)	Աշխատանքային ստաժը քոլեջում	Դասավանդվող մոդուլները կամ առարկաները	Բեռնվածությունը՝ տարեկան ժամերով (տարեկան ժամաքանակը)1-ին կիսամյակ, 2-րդ կիսամյակ	Հիմնական աշխատող, համատեղող	Հասցե, հեռախոս
1								

2								

Աղյուսակ № 3

Դասախոսի ուսումնական գործունեության գնահատման թերթիկ

№	Վերլուծություն
1	Ուսանողներին տրամադրում է դասախոսությունների փաթեթ, ուսումնառության նյութեր
2	Բացահայտում է նյութի առանցքային հարցերը
3	Բացահայտում է նյութի տեսական ու գործնական նշանակությունը
4	Նյութը շարադրում է պարզ ու մատչելի, մասնագիտական շարադրանքով
5	Ապահովում է հետադարձ կապը լսարանի հետ
6	Ուսանողներին տրամադրում է մասնագիտական բանավեճի, քննարկում նրանց տեսակետները
7	Ուսանողներին նախապատրաստում է հետազոտական, ինքնուրույն աշխատանքի
8	Դասաժամն օգտագործում է արդյունավետ
9	Ապահովում է լսարանի կարգապահությունը
10	Խստապահանջ է, բարյացկամ ու հարգալից
11	Ունի պատշաճ պահվածք ու կեցվածք
12	Գիտելիքները գնահատում է անկողմնակալ

Ամբիոնների վարիչների համար դասալսումների վերլուծությունների արդյունքների, ամփոփ տվյալների հավաքագրման և ամփոփման ձևաչափ

Աղյուսակ№ 4

Ամբիոնի դասալսումները՝

Դասալսման ամսաթիվ	Դասալսումն անցկացնող(անկացնողներ)	Ամբիոն	Առարկայի(դասընթացի) անվանում	Դասախոսի անուն, ազգանուն	Կուրս

Աղյուսակ № 5

Ամբիոնին կից կաբինետը /լաբորատորիան	Կաբինետի/լաբորատորիայի վարիչը	Կաբինետի /լաբորատորիայում կազմում ընդգրկված դասախոսները	Կաբինետի կողմից իրականացված աշխատանքները(միջոցառումները, սեմինարները, լրացուցիչ խորհրդատվությունները, հետազոտական աշխատանքներ և այլն)	Կաբինետի աշխատանքների ժամանակացույցը	Կաբինետին կից խմբակները

Աղյուսակ№6

Պրակտիկաների արդյունքները

Կուրսը	Պրակտիկայի ձևը	Ուսանողների քանակը	Պրակտիկայի անցկացման վայրը	Ուսանողների առաջադիմությունը

Աղյուսակ№ 7

Հետազոտական աշխատանք իրականացրած դասախոսները և աշխատանքն իրականացրած խումբը, աշխատանքում ընդգրկված սովորողների քանակը	Հետազոտական աշխատանքների անվանումները	Հետազոտական աշխատանքի նպատակը և աշխատանքի առջև դրված խնդիրները	Հետազոտական աշխատանքի արդյունքները

ԿՏՊՔ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- ԿՏՊՔ-ն ամբիոնների աշխատանքներում առաջնորդվում է Որակի կառավարման սկզբունքով,
- Նախորդ տարվա արդյունքների ամփոփման արդյունքում դուրս բերված բարելավումների հիման վրա սահմանվող նպատակներ,
- ԿՏՊՔ ռազմավարական երկարաժամկետ նպատակներից բխեցվող հստակ, չափելի նպատակների սահմանում,
- Նպատակների իրականացման ակնկալվող վերջնարդյունքներ,
- Նպատակների իրականացման պատասխանատուներ,

- Նպատակների իրականացման ցուցիչներ:

ԿՏՊՔ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Սահմանված նպատակների իրականցման արդյունքները , վերլուծությունները, չիրականացված նպատակների պատճառները, առաջացած խնդիրները, արձանագրված ձեռքբերումները
- Վերլուծական բաղադրիչի կիրառումը ներկայացվող տեղեկատվություններում
- Նիստերին քննարկված առանցքային հարցերը, կայացված որոշումները և դրանց արդյունքները
- Ամբիոնների դասախոսների վերհանված կարիքները, դրանց ուղղությամբ իրականացված աշխատանքները
- Առարկաների(մոդուլների) ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման վերաբերյալ տեղեկություն, փոփոխությունների հիմքերը, արդյունքները
- Ուսանողներին տրվող գրավոր աշխատանքների կամ հանձնարարականների, ռեֆերատների, ինքնուրույն, անհատական, հետազոտական աշխատանքների և գնահատման թերթիկների վերաբերյալ քննարկումների վերաբերյալ տեղեկատվություն, դրանց արդյունքների ընդհանրական վերլուծություններ
- Պետական ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման, արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն, ամփոփիչ ատեստավորման հարցաշարերի կազմման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ուսանողների ցուցաբերած առաջադիմության ընդհանուր վերլուծություն
- Իրականացված դասալսումների արդյունքների վերլուծությունները, վերհանված հիմնական կարիքները, դրանց վերաբերյալ իրականացված քայլերը կամ կայացված որոշումներ
- Ամբիոնի վարիչի ընդհանուր վերլուծական գնահատականը ամբիոնի դասախոսների տարեկան աշխատաքների վերաբերյալ
- Ամբիոնին կից կաբինետների աշխատանքների արդյունքների վերլուծություն
- Ամբիոնի տարվա պրակտիկաների արդյունքների վերաբերյալ վերլուծություն, ուսանողների դրսևորած առաջադիմության վերլուծություն

- Ամբիոնի վարիչի ընդհանուր դիտարկումները և գնահատումը ուսանողների ընդհանուր առաջադիմության վերաբերյալ
- Ամբիոնի տարեկան աշխատանքների արդյունքների , ձեռքբերումների ինքնագնահատում, ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն, հաջորդ տարվա պլանավորումների արձանագրում , ամբիոնների առաջարկներ ուսումնական գործընթացի բարելավումների նպատակով :

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի պարտականությունները կատարող՝

Վ. Թովմասյան